Ծովային ելք չունեցող զարգացող երկրների բազմակողմ համագործակցության խնդիրները

ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

Հոդվածը քննության է առնում ծովային ելք չունեցող զարգացող երկրների բազմակողմ համագործակցության առանձնահատկությունները: Քննարկվում են տարանցման պայմանների բարելավման հարցում ցամաքով շրջափակված երկրների հավաքական ազդեցության իրավաքաղաքական սահմանափակումները, համեմատվում՝ միջազգային տարբեր հարթակներում այս երկրների փոխգործակցության ինստիտուցիոնալ հիմքերը: Հոդվածը ներկայացնում է ՄԱԿ-ի շրջանակներում գործող՝ ծովային ելք չունեցող զարգացող երկրների խմբի աշխատանքներում Հայաստանի ներգրավման արտաքին քաղաքական նշանակությունը:

Բանալի բառեր
ծովային ելք չունեցող զարգացող երկրներ, բազմակողմ դիվանագիտություն, տարանցման հիմնախնդիրներ, բանակցային խմբեր, ՄԱԿ, ԱՀԿ

Նախաբան

Կորոնավիրուսի տարածման համատեքստում Հայաստանում կարծիքներ հնչեցին[1], որ միջազգային հարթակներում անհրաժեշտ է բարձրացնել ծովային ելք չունեցող զարգացող երկրների խոցելիության խնդիրը՝ հաշվի առնելով տարանցիկ բեռնափոխադրումների ու տրանսպորտային հաղորդակցության հասանելիության կարևորությունը: Ի թիվս այլ երկրների՝ Հայաստանը ևս ՄԱԿ-ում

[1] **Մարջանյան Ա.,** Կողպված երկրներ, «Օրբելի» վերլուծական-հետազոտական կենտրոն, 2020, https://orbeli.am (20.05.2020); **Հովհաննիսյան Հ.,** Անհրաժեշտ է, որ Հայաստանը դիվերսիֆիկացնի էներգակիրների ներկրման ուղղությունները, և խորությամբ դրվի Վրաստանի հետ տնտեսական համագործակցության հարցը. Արա Մարջանյան, *Թերթ.am*, 19 մարտի 2020, https://www.tert.am/am/news/2020/03/19/ara-marjanyan/3240822 (20.05.2020):

անդրադարձավ տարածաշրջանային և կառուցվածքային սահմանափակումների պայմաններում «կենսական ապրանքների և սարքավորումների տարանցումն ապահովելու անհրաժեշտությանը»[2]: Թեև համավարակն ավելի է սրել ցամաքով շրջափակված բոլոր երկրների տնտեսական դժվարությունները, միջազգային հարթակներում այս երկրների համախմբումը բախվում է խոչընդոտների: Հոդվածը ներկայացնում է այդ խոչընդոտները՝ վերլուծելով ծովային ելք չունեցող զարգացող երկրների հավաքական դերի թույլ կողմերը: Այս երկրների բազմակողմ համագործակցության սահմանների հստակեցումը կարևոր է դեպի ծով ելքի բացակայության հիմնախնդիրների արդյունավետ հասցեագրման, բազմակողմ և երկկողմ գործիքակազմերի ճիշտ ընտրության տեսանկյունից:

Հարթակ՝ առանց հենման կետի

1994թ. Միավորված ազգերի կազմակերպությունում (ՄԱԿ) ստեղծված ծովային ելք չունեցող զարգացող երկրների խումբը (Խումբ) մի հարկի տակ է հավաքել պետությունների[*], որոնք տարբերվում են թե՛ քաղաքակրթական, թե՛ տնտեսական զարգացման հատկանիշներով[3], թե՛ արտաքին քաղաքական առաջնահերթություններով: Աններդաշնակ խճանկար կազմող այս երկրներին միավորող միակ գործոնը ցամաքով շրջափակման աշխար-

[2] Հայաստանի մշտական ներկայացուցիչը մասնակցեց ՄԱԿ Գլխավոր քարտուղարի տեղակալի հետ առցանց քննարկմանը, ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցչություն, 03 ապրիլի, 2020, https://un.mfa.am (20.05.2020):

[*] Ադրբեջան, Աֆղանստան, Բոթսվանա, Բոլիվիա, Բութան, Բուրկինա Ֆասո, Բուրունդի, Եթովպիա, Զամբիա, Զիմբաբվե, Թուրքմենստան, Լաոս, Լեսոտո, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Հայաստան, Հարավային Սուդան, Հյուսիսային Մակեդոնիա, Ղազախստան, Ղրղզստան, Մալավի, Մալի, Մոլդովա, Մոնղոլիա, Նեպալ, Նիգեր, Չադ, Պարագվայ, Ռուանդա, Սվազիլենդ, Տաջիկստան, Ուգանդա, Ուզբեկստան:

[3] UNOHRLLS, Financing Infrastructure in the Transport Sector in Landlocked Developing Countries: Trends, Challenges & Opportunities, 2018, pp. 2, 7-8.

հագրական առանձնահատկությունն է[4]: Սակայն այդ գործոնով պայմանավորված դժվարությունները հաղթահարելու հիմնախնդիրները, որոնք հիմնականում վերաբերում են տարանցման պայմաններին, տարբեր նշանակություն ունեն Խմբին պատկանող երկրների արտաքին քաղաքական օրակարգերում:

Ծովային ելքի բացակայության հարցից բացի՝ միջազգային հարաբերությունների մնացյալ հիմնախնդիրներում այս երկրները հետապնդում են տարբեր, երբեմն իրարամերժ շահեր: Նրանք հարում են աշխարհաքաղաքական հակոտնյա կենտրոնների, իսկ Խմբի ներսում երկկողմ հարաբերություններն աչքի չեն ընկնում առանձնակի գործընկերությամբ: Խմբի անդամ են թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը, որոնց ներկայությունը միջազգային նույն հարթակում անիրատեսական է դարձնում կառուցողական մթնոլորտի ձևավորման հնարավորությունը:

Պատմությանը հայտնի են դեպքեր, երբ որևէ գործոնի ազդեցությամբ ստեղծված բազմակողմ հարթակներն ի զորու են եղել հաղթահարել իրենց ներսում առկա շահերի բախումն ու հակասությունները՝ թելադրելով խաղի կանոններ նույնիսկ գերտերությունների հետ հարաբերություններում: Սակայն եթե նավթի կայուն գների ապահովումը Նավթ արտահանող երկրների կազմակերպության անդամ պետությունների արտաքին քաղաքական գերակայությունների շարքում մշտապես առաջնային դիրք է զբաղեցրել, ապա ծովային ելքի բացակայության հիմնախնդիրներն անհամեմատ նվազ նշանակություն ունեն ցամաքով շրջափակված երկրների արտաքին քաղաքական օրակարգերում[5]: Ընդ որում, եթե

---

[4] **Uprety K.,** The Transit Regime for Landlocked States: International Law and Development Perspectives, World Bank, Washington, D.C., 2005, p. 7.

[5] Միակ բացառությունը Բոլիվիան է, որի արտաքին քաղաքական գլխավոր խնդիրը դեպի ծով ելքի հարցն է: Սակայն, ի տարբերություն Խմբի մյուս երկրների, որոնք շահագրգռված են տարանցման պայմանների բարելավմամբ, Բոլիվիան Չիլիից պահանջում է դեպի ծով ինքնիշխան ելք (**St John R. B.,** Bolivia: Geopolitics of a Landlocked State, London, Routledge, 2019, pp. 208-209): 2018թ. հրապարակած իր վճռով Արդարադատության միջազգային դատարանը մերժել է Բոլիվիայի հայցն ընդդեմ Չիլիի, որը

մի դեպքում նավթի գործոնը կենսական է կազմակերպության բոլոր անդամների համար, ապա երկրորդի պարագայում տարանց-ման խնդիրները բոլորի համար չունեն նույն կարևորությունը: Նավթի բարձր գները բխում են թե՛ Սաուդյան Արաբիայի, թե՛ Իրանի շահերից, իսկ Հայաստանի համար անբարենպաստ տարանցիկ պայմանների ստեղծումն Ադրբեջանի ռազմավարական խնդիրներից է:

Թեև որոշ երկրներ առավել ակտիվ ներգարվվածություն են ունեցել Խմբի աշխատանքներում, այս հարթակը չունի այն կենտրոնը, որը կհավասարակշռի բազմաշերտ շահերն ու առաջնահերթությունները: Ո՛չ Մոնղոլիան, որը կարևոր դեր է խաղացել Խմբի ձևավորման[6], ինչպես նաև հետագայում դրա շրջանակներում Ծովային ելք չունեցող զարգացող երկրների միջազգային գիտահետազոտական կենտրոնի ստեղծման գործում[7], ո՛չ Լաոսը, որի նախաձեռնությամբ[8] սկիզբ առավ Խմբի ԱԳ նախարարների ամենամյա հանդիպումների ձևաչափը, ոչ էլ առևտրի և զարգացման հարցերում Խմբի շահերը ներկայացնելու

վերջինից պահանջում էր բանակցել դեպի Խաղաղ օվկիանոս ինքնիշխան ելք տրամադրելու շուրջ (International Court of Justice, Obligation to Negotiate Access to the Pacific Ocean (Bolivia v. Chile), Judgement of 1 October, 2018, https://www.icj-cij.org/files/case-related/153/153-20181001-JUD-01-00-EN.pdf (02.05.2020)):

[6] Secretary-General's remarks at opening ceremony of the Think Tank on Trade and Land Locked Developing Countries [as prepared for delivery], 27 July 2009, Ulaanbaatar, https://www.un.org/sg/en/content/sg/statement/2009-07-27/secretary-generals-remarks-opening-ceremony-think-tank-trade-and (02.05.2020).

[7] Report of The Inaugural Intergovernmental Meeting of the International Think Tank for LLDCs, Ulaanbaatar, Mongolia, 11-12 June 2018, p. v, http://unohrlls.org/custom-content/uploads/2019/04/Report-Inaugural-Meeting-ThinkTankFor-LLDCs-.pdf (02.05.2020).

[8] Letter dated 2000/09/20 from the Permanent Representative of the Lao People's Democratic Republic to the United Nations and Chairman of the Group of Landlocked Developing Countries addressed to the Secretary-General, United Nations Document, A/C.2/55/2, p. 2.

լիազորություն ստացած[9] Պարագվայը չեն հավակնում ստանձնել Խմբի առաջնորդի դերը:

Ծովային ելք չունեցող զարգացող երկրների հավաքական ջանքերը սահմանափակ հնարավորություն ունեն ազդելու Խմբի երկրների համար տարանցման բարենպաստ պայմանների հաստատման վրա: Խմբի բազմակողմ համագործակցությունն ինչ-որ չափով կորցրել է իր կենսունակությունն այս երկրներին հուզող խնդիրների միջազգային իրավական ամրագրումից հետո: Տարանցման և մի շարք այլ իրավունքների համընդհանուր ճանաչումը համատեղ ջանքեր էր պահանջում, և այդ հարցում ցամաքով շրջափակված երկրներին հաջողվում էր մի կողմ թողնել կողմնակի տարաձայնություններն ու հանդես գալ մեկ ձայնով[10]: Չնայած դրան՝ ընդունված կարևորագույն կոնվենցիաները հավասարակշռում են դեպի ծով ազատ ելք ունենալու սկզբունքը տարանցիկ պետությունների ինքնիշխանության սկզբունքով: «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի 1982թ. կոնվենցիան նաև սահմանում է, որ տարանցման պայմանները համաձայնեցվում են

---

[9] Letter dated 2005/08/25 from the Permanent Representative of Paraguay to the United Nations addressed to the Secretary-General, United Nations Document, A/60/308, p. 7.

[10] Ծովային ելք չունեցող երկրների շահերն ամբողջությամբ համահունչ չէին Ծովային իրավունքի հարցերով ՄԱԿ-ի 3-րդ համաժողովի ընթացքում: Զարգացած երկրներին տարանցման հարցերից առավել հուզում էր օվկիանոսի ավազանի պաշարներից օգտվելու և գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու իրավունքների ճանաչումը: Ցամաքով շրջափակված որոշ երկրներ, որ նաև տարանցիկ երկրներ են, վերապահումով էին մոտենում տարանցման անսահմանափակ ազատության պահանջին: Այդուհանդերձ ծովային ելք չունեցող զարգացած և զարգացող երկրներին հաջողվեց միավորվել և աշխարհագրական անբարենպաստ դիրք ունեցող պետությունների հետ բանակցային առանձին խումբ ձևավորել (**Tuerk H.,** Forgotten Rights? Landlocked States and the Law of the Sea, Contemporary Developments in International Law Essays in Honour of Budislav Vukas, edited by R. Wolfrum, M. Seršić, T. Šošić, Boston, Brill Nijhoff, 2015, pp. 346, 348; **Hafner G.,** Die Gruppe der Binnen- und geographisch benachteiligten Staaten auf der Dritten Seerechtskonferenz der Vereinten Nationen, Zeitschrift für Ausländisches Öffentliches Recht und Völkerrecht, 1978, 38(3-4), p. 569):

ծովային ելք չունեցող և տարանցիկ երկրների միջև երկկողմ, տարածաշրջանային կամ ենթատարածաշրջանային կարգավորումների միջոցով[11]: Երբ տարանցման պայմաններն առաջին հերթին կախված են տարանցիկ երկրի հետ քաղաքական հարաբերությունների մակարդակից, այդ հարցում Խմբի աջակցությունը սոսկ հռչակագրային նշանակություն ունի:

«Ընդլայնված տեսանելիություն»

Ըստ կանոնակարգի՝ Խումբն իր անդամներին հարթակ է տրամադրում՝ «ձևավորելու և առաջ մղելու հավաքական տնտեսական շահերը՝ այդ թվում, մասնավորապես, համաշխարհային համաձայնություն ստացած նպատակների, թիրախների և գործողությունների ծրագրերի արդյունավետ իրականացումը»[12]: Համաշխարհային այդ նպատակները՝ առաջին հերթին «Կայուն զարգացման 2030 օրակարգը»[13], ֆինանսավորման հարցերի վերաբերյալ Ադիս Աբեբայի գործողությունների ծրագիրը[14], նաև Աղետների ռիսկերի նվազեցման Սենդայի գործողությունների շրջանակային ծրագիրը,[15] թեև իրավական պարտադիր ուժ չունեն, ճանաչում են ծովային ելք չունեցող զարգացող երկրների առանձնահատուկ մարտահրավերներն ու զարգացման գործում միջազգային հանրության աջակցության անհրաժեշ-տությունը:

[11] United Nations Convention on the Law of the Sea, Montego Bay, 1982, Article 125, United Nations, Treaty Series, vol. 1833, No. 31363.

[12] Note verbale dated 13 December 2017 from the Permanent Mission of Zambia to the United Nations addressed to the Secretary-General - Rules of procedure of the Group of Landlocked Developing Countries, United Nations Document, A/72/655, p. 3.

[13] Transforming our world: the 2030 Agenda for Sustainable Development: resolution adopted by the General Assembly, United Nations Document, A/RES/70/1.

[14] Addis Ababa Action Agenda of the 3rd International Conference on Financing for Development (Addis Ababa Action Agenda): resolution adopted by the General Assembly, United Nations Document, A/RES/69/313.

[15] Sendai Framework for Disaster Risk Reduction 2015-2030: resolution adopted by the General Assembly, United Nations Document, A/RES/69/283.

Խմբի երկրների հատուկ կարիքների շուրջ միջազգային «ընդլայնված տեսանելիությունն» արձանագրվում է նաև ծովային ելք չունեցող զարգացող երկրների վերաբերյալ Վիեննայի գործողությունների ծրագրում (ՎԳԾ)[16]: Տեսանելիությունը՝ տեսանելիություն, սակայն համաշխարհային այս օրակարգը չունի գործիքներ՝ վերացնելու զարգացման գլխավոր քաղաքական խոչընդոտները՝ «փակ սահմանները, շրջափակումները, անտեղի խտրական առևտրային ռեժիմները»[17]:

Դժվար է ակնկալել, որ նույնիսկ Խմբի ներսում անվերապահ սատարում կստանան այն երկրները, որոնց հարևանները խոչընդոտներ են հարուցում տարանցման իրավունքների իրացման համար: Հայաստանը թե՛ Խմբում, թե՛ միջազգային այլ հարթակներում բազմիցս բարձրացրել է Թուրքիայի կողմից շրջափակման խնդիրը: Այդ հարցում անիրատեսական է ոչ միայն Թյուրքական խորհրդի անդամ հանդիսացող կենտրոնասիական երկրների, առավել ևս Ադրբեջանի, այլ նաև Խմբի մյուս երկրների աջակցությունը Հայաստանին: Որքան էլ ՄԱԿ-ում Նեպալի մշտական ներկայացուցիչն իր երկրի 2015թ. շրջափակման համատեքստում անթույլատրելի էր համարում տարանցման համար խոչընդոտների

---

[16] Programme of Action for Landlocked Developing Countries for the Decade 2014-2024: resolution adopted by the General Assembly, United Nations Document, A/RES/69/137.

[17] «Կարևոր է, որ ֆինանսական դժվարությունների հետ մեկտեղ մենք առավել ուշադրության արժանացնենք կայուն զարգացմանն ուղղված խոչընդոտները՝ փակ սահմաններ, շրջափակումներ, անտեղի խտրական առևտրային ռեժիմներ: Սրա վառ օրինակներից է այն, որ Հայաստանի նկատմամբ կիրառվող անօրինական շրջափակման պատճառով չի գործում Հայաստանի և Թուրքիայի միջև երկաթուղին (Գյումրի-Կարս)՝ խոչընդոտ հանդիսանալով տարածաշրջանային կայուն զարգացմանը...», - ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի՝«2030 օրակարգի ֆինանսավորումը. Ադիս Աբեբայի գործողությունների ծրագրի կայուն զարգացման նպատակների ֆինանսավորման հարցերի շուրջ» քննարկմանն ունեցած ելույթից, Նյու Յորք, 2016թ. փետրվար, https://www.mfa.am/hy/speeches/2016/02/24/min-2030agenda/5915 (02/05/2020):

ստեղծումը[18], Խմբի երկրները հազիվ թե հանդես գան ընդդեմ Հնդկաստանի: Հայաստանը, որ միայն 2019թ. է դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հյուսիսային Մակեդոնիայի հետ[19], չի վտանգի Հունաստանի հետ հարաբերությունները, եթե վերջինս 1994թ. օրինակով[20] կրկին հրաժարվի դեպի ծով ելք տրամադրել մակեդոնական ապրանքներին:

Բանակցային համատեղ կարողություններ

Խումբը նպատակ ունի «ընդլայնել միջազգային տնտեսական հիմնական խնդիրների շուրջ բանակցային համատեղ կարողությունները ՄԱԿ-ի համակարգում, Առևտրի համաշխարհային կազմակերպությունում (ԱՀԿ) և միջազգային ու բազմակողմ բոլոր հարթակներում»: ՄԱԿ-ում Խմբի համագործակցության շարունակականությունն ապահովող ձևաչափերից մեկն ամենամյա նախարարական հանդիպումն է Նյու Յորքում, որը տեղի է ունենում Գլխավոր ասամբլեայի մեկնարկող նիստի բարձրաստիճան շաբաթվա ընթացքում: Որպես կանոն այս հանդիպումներին մասնակցում են Խմբի նախարարների կեսից էլ քիչը: Մյուսների օրակարգային գերհագեցածությունը ստիպում է նախապատվությունը տալ առաջնահերթություն ներկայացնող միջոցառումներին և երկկողմ շփումներին: Մասնակցության մակարդակը որոշակի ցուցիչ է, թե ինչ կարևորություն են տալիս Խմբի երկրներն

---

[18] Statement Delivered by HE Mr. Durga Prasad Bhattarai, Ambassador/Permanent Representative of Nepal to the United Nations at the 15th Annual Ministerial Meeting of the LLDCs on the Sideline of the 71st session of the UNGA (New York, 22 September 2016), http://unohrlls.org/custom-content/uploads/2016/09/Nepal-LLDCs-MM-Statement.docx (02.05.2020).

[19] Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հյուսիսային Մակեդոնիայի հետ, ՀՀ ԱԳՆ, 27 սեպտեմբերի, 2019, https://www.mfa.am/hy/press-releases/2019/09/27/fm_north_macedonia/9873 (02.05.2020):

[20] **Syrigos A. M.,** Landlocked States and Access to the Sea: The Greek Blockade of the Former Yugoslav Republic of Macedonia, *Revue Hellenique de Droit International*, 1996, 49, 107-126.

իրենց բազմակողմ համագործակցության այս հարթակին կամ ընդհանրապես ցամաքով շրջափակման հիմնախնդիրներին:

Խումբն իր կազմից երկու տարվա հաճախականությամբ ընտրում է բյուրո՝ համագործակցությանը համակարգված բնույթ հաղորդելու և նախարարական հանդիպումներին ընդառաջ համատեղ գործողությունները քննարկելու նպատակով: Բյուրոյի 2019թ. կայացած վերջին ընտրությունների արդյունքում կրկին չհաջողվեց ամբողջական կազմ հավաքել, և Արևելաեվրոպական ենթախմբին հատկացված 1 տեղը շարունակում է թափուր մնալ[21]: Այդ հարցում կոնսենսուսի բացակայության պատճառը դժվար չէ կռահել՝ հաշվի առնելով երեք երկիր ներառող ենթախմբում Հայաստանի և Ադրբեջանի ներկայությունը:

Աղյուսակ 1

Խմբի ԱԳ նախարարների ամենամյա հանդիպումների (2016-2019թթ.) և ՎԳԾ միջնաժամկետ վերանայման բարձրաստիճան հանդիպման(2019թ.) մասնակցության մակարդակը

	ՎԳԾ	*2019թ.*	*2018թ.*	*2017թ.*	*2016թ.*
Ադրբեջան	-	-	*3-րդ քար.*	*3-րդ քար.*	***Նախար.***
Աֆղան.	*մ/ն***	-	-	*փոխնախ.*	*Խորհրդ.*
Բոթսվանա	*մ/ք**** տեղ*	***Նախար.***	*վ/պետ*****	*Խորհրդ.*	-
Բոլիվիա	-	*փոխնախ.*	*1-ին քար.*	*մ/ն*	***Նախար***
Բութան	*ԱԳ քարտ.*	***Նախար***	***Նախար***	***Նախար.***	***Նախար.***
Բուրկինա Ֆասո	-	*վ/պետ*	*Խորհրդ.*	*Խորհրդ.*	***Նախար.***
Բուրունդի	-	-	-	-	*գլ. տնօր.*
Եթովպիա	*մ/ն*	-	*Փոխնախ.*	*վ/պետ*	***Նախար.***
Զամբիա	***նախար***	***նախար***	***Նախար.***	***Նախար***	*մշ. քարտ.*

[21] Summary Report of the First Meeting of the LLDCs Group at the Ambassadorial Level, 22 January 2020, p. 5, http://unohrlls.org/custom-content/uploads/2020/03/Summary-Report-of-the-LLDC-Ambassadorial-Level-Meeting_22January.pdf (02.05.2020).

Զիմբաբվե	մ/ն	-	մ/ն տեղ.	մշ. քարտ.	**Նախար.**
Էսվատինի	**Նախար.**	-	-	-	-
Թուրքմեն.	-	-	-	3-րդ քար.	-
Լաոս	փոխնախ.	**Նախար.**	վ/պետ	**Նախար.**	**Նախար.**
Լեսոտո	վ/պետ	**Նախար.**	**Նախար.**	**Նախար.**	Խորհրդ.
ԿԱՀ	-	-	-	**Նախար.**	**Նախար**
Հայաստան	մ/ն	-	վ/պետ	վ/պետ	վ/պետ
Հվ. Սուդան	-	**Նախար.**	վ/պետ	Խորհրդ.	**Նախար.**
Հս. Մակեդ.	-	-	-	-	-
Ղազախս.	փոխնախ.	**Նախար.**	**Նախար.**	**Նախար.**	Փոխնախ.
Ղրղզստան	մ/ն	-	**Նախար.**	-	**Նախար.**
Մալավի	**Նախար.**	**Նախար.**	**Նախար.**	**Նախար.**	**Նախար.**
Մալի	վ/պետ	մ/ն	-	-	-
Մոլդովա	-	-	-	-	Փոխնախ.
Մոնղոլիա	մ/ն	մ/ն	**Նախար.**	**Նախար.**	**Նախար.**
Նեպալ	մ/ն	**Նախար.**	**Նախար.**	**Նախար.**	մ/ն
Նիգեր	-	-	-	վ/պետ	-
Չադ	Պետքար.	-	-	-	-
Պարագվայ	մ/ն	**Նախար.**	**Նախար.**	**Նախար.**	**Նախար.**
Ռուանդա	մ/ն	-	-	-	-
Տաջիկստ.	Փոխնախ.	-	մ/ն	-	**Նախար.**
Ուգանդա	մ/ն տեղ.	Պետնախ.	մշ. քարտ.	-	վ/պետ
Ուզբեկ.	մ/ն	-	-	-	-
Նախարար	**3**	**10**	**9**	**10**	**14**

** ՄԱԿ-ում մշտական ներկայացուցիչ:

*** Ներդրումների, առևտրի և արդյունաբերության նախարարության մշտական քարտուղար:

**** Վարչության պետ

Աղբյուրը՝ Առավել նվազ զարգացած, դեպի ծով ելք չունեցող զարգացող և փոքր կղզիական զարգացող երկրների հարցերով ՄԱԿ-ի բարձր հանձնակատարի գրասենյակ

Խմբի երկրների համագործակցությունն ինստիտուցիոնալ հիմքեր է ստացել ՄԱԿ-ի շրջանակներում, մինչդեռ միջազգային առևտրի խնդիրներով զբաղվող միջպետական կարևորագույն հարթակում՝ ԱՀԿ-ում, ծովային ելք չունեցող զարգացող երկրների առանձին բանակցային խումբ մինչ օրս ձևավորված չէ[22]: Սա զարգացող երկրներին բնորոշ ընդհանուր գիծ է, որոնք, ի տարբերություն պայմանագրային պարտավորություններ սահմանող ԱՀԿ-ի, ավելի վստահ են դիրքավորվում ՄԱԿ-ի՝ հռչակագրային բնույթի փաստաթղթեր ընդունող համակարգում[23]: Թեև Ժնևում Խմբի առևտրի ներկայացուցիչները պարբերաբար խորհրդակցություններ են անցկացնում, առևտրի նախարարներն ԱՀԿ-ի համաժողովներին ընդառաջ ավանդաբար հանդիպում և համատեղ հայտարարություններ են ընդունում, սակայն առևտրի դյուրացման ոլորտից բացի[24]՝ բանակցություններում Խումբը հանդես չի գալիս միասնական դիրքերից: Ծովային ելք չունեցող զարգացող երկրներն ԱՀԿ-ում ակտիվորեն ներգրավված են բանակցային տարբեր խմբերում, որոնք հավաքական շահերի

---

[22] **Erdenetsogt O.,** The Importance of Multilateral Trade Negotiations for LLDCs and Mongolia in Particular, *The Northeast Asian Economic Review*, 2016, **4,** 2, p. 62.

[23] **Narlikar A.,** International Trade and Developing Countries: Bargaining Coalitions in the GATT & WTO, London, Routledge, 2003, p. 25.

[24] ԱՀԿ-ի «Առևտրի դյուրացման մասին» համաձայնագրի (Protocol amending the Marrakesh Agreement establishing the World Trade Organization, Geneva, 2014, WTO Documents, WT/L/940) շուրջ երկար ձգված բանակցություններում Խմբի երկրները ջանքեր են գործադրել տարանցման մասին կարևոր սկզբունքներ ընդգրկելու համար (**Neufeld N.,** The long and winding road: How WTO members finally reached a trade facilitation agreement, WTO Staff Working Papers ERSD-2014-06, WTO, Economic Research and Statistics Division, 2014, p. 4)։ Այնուամենայնիվ բանակցությունների եզրափակիչ տարում ԱՀԿ գլխավոր տնօրենի աշխատակազմի ղեկավարը հորդորում էր ծովային ելք չունեցող զարգացող երկրներին «*առավել* [ընդգծումը մերն է — Տ. Զ.] ակտիվ դերակատարում ունենալ բանակցություններում» (Arancha Gonzalez urges landlocked poor countries to play active role in trade facilitation talks, WTO, 20 March, 2013, https://www.wto.org/english/news_e/news13_e/lldc_20mar13_e.htm (30.04.2020))։

առաջ մղման հարուստ փորձ ունեն[25]: Խմբի երկրների կեսից ավելին նաև դասվում են առավել նվազ զարգացած երկրների շարքին, որոնք որպես առանձին բանակցային խումբ տասնամյակներ ի վեր հանդես են գալիս ԱՀԿ-ում և ստանում իրենց կարգավիճակից բխող արտոնություններ[26]: Հատուկ և տարբերակված մոտեցման սկզբունքներ են գործում ինչպես առավել նվազ զարգացած, այնպես էլ զարգացող բոլոր երկրների համար, սակայն ծովային ելքի բացակայությամբ պայմանավորված առանձին ռեժիմ ԱՀԿ-ում սահմանված չէ[27]:

Միջազգային մեկ այլ հարթակում՝ «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի[28] բանակցային գործընթացում, Հայաստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Աֆղանստանը ձևավորել են ծովային ելք չունեցող զարգացող լեռնային երկրների խումբը: Չնայած հնչեցված կոչերին՝ Նեպալը հրաժարվեց միանալ այս երկրներին՝ նախաձեռնելով լեռնային պետությունների շահերը հետապնդող մեկ այլ խումբ: Ի տարբերություն առաջին չորս երկրների, որոնք սկզբունքային են համարում ծովային ելքի բացակայության և լեռնային ռելիեֆի աշխարհագրական առանձնահատկությունների փոխկապակցումը՝

[25] Ուշագրավ է այն հանգամանքը, որ պատմականորեն ծովային ելք չունեցող զարգացող երկրներն առաջինն են դասակարգվել որպես առանձին խումբ զարգացող երկրների շարքում (**Fialho Dj., Van Bergeijk P. A. G.,** The Proliferation of Developing Country Classifications, *The Journal of Development Studies,* 2017, **53**, 1, p. 100):

[26] **Priyadarshi Sh., Rahman T.,** Least-Developed Countries in the WTO: Growing Voice in The Oxford Handbook on the World Trade Organization, edited by Narlikar A., Daunton M., and Stern R., Oxford, Oxford University Press, 2012, pp. 288-299.

[27] International Think Tank for Landlocked Developing Countries, Multilateral Trade Negotiations and LLDCs: A handbook for negotiators and practitioners of LLDCs, 2015, pp. 93, 194-195.

[28] United Nations Framework Convention on Climate Change, New York, 1992, United Nations, Treaty Series, vol. 1771, No. 30822.

Նեպալը հանդես է գալիս լեռնային բոլոր երկրներին համախմբելու դիրքերից[29]:

Չափելի աջակցություն. ֆինանսական և տեխնիկական միջոցների ներգրավման խնդիրը

Խմբի կանոնակարգային նպատակների շարքում առանձնանում է միջազգային դոնոր հանրությունից ֆինանսական և տեխնիկական միջոցների ներգրավման խնդիրը: Դեռևս 1995թ. Նեպալի ներկայացուցիչն իրավամբ նկատել է, որ «եթե տարանցման հետ կապված հարցերը լուծվել և կարող են լուծվել *երկկողմ մակարդակում* [ընդգծումը՝ Տ. Զ.], տարանցիկ ենթակառուցվածքների բարելավման համար անհրաժեշտ կլինի միջազգային ֆինանսական աջակցություն»[30]: Խմբին անդամակցությունը՝ խոցելի երկրի կարգավիճակը, լրացուցիչ հնարավորություն է տալիս՝ ստանալու զարգացման պաշտոնական աջակցություն: Ծովային ելք չունեցող զարգացող երկրների մեծ մասի համար զարգացման պաշտոնական աջակցությունն արտաքին ֆինանսավորման հիմնական աղբյուրն է: 2017թ. Խմբի երկրների ստացած աջակցությունը հանրագումարով կազմել է 28 մլրդ ԱՄՆ դոլար կամ զարգացող երկրներին ուղղվող ողջ աջակցության 17 տոկոսը: Այդուհանդերձ ֆինանսական այս հոսքը հավասարապես չի բաշխվում Խմբի ներսում, այն խիստ կենտրոնացած է մի քանի

---

[29] **Bhandary R. R.,** Coalition strategies in the climate negotiations: an analysis of mountain-related coalitions, **International Environmental Agreements: Politics, Law and Economics,** 2015, **17**, p. 186; **Roberts J. T.,** Multipolarity and the new world (dis)order: US hegemonic decline and the fragmentation of the global climate regime, *Global Environmental Change*, 2011, **21**, 3, p. 779.

[30] Report of the 2nd Meeting of Governmental Experts from Land-locked and Transit Developing Countries and Representatives of Donor Countries and Financial and Development Institutions, held at United Nations Headquarters, New York, from 19 to 22 June 1995, United Nations Document, TD/B/42(1)/11 TD/B/LDC/AC.1/7, p. 6.

առավել նվազ զարգացած երկրների վրա[31]: Ոլորտային ուղղվածության համատեքստում ուշագրավ է այն հանգամանքը, որ Խմբի երկրների համար այդքան կարևոր ենթակառուցվածքների ոլորտն առաջնային թիրախը չէ: 2015թ. ենթակառուցվածքների զարգացմանն է ուղղվել ընդհանուր հոսքերի միայն 22 տոկոսը, ինչը զարգացող այլ երկրների համեմատ ավելի ցածր ցուցանիշ է[32]:

Ծովային ելք չունեցող զարգացող երկրների տնտեսությունները հատկապես խոցելի են կորոնավիրուսի համավարակի պայմաններում: Թեև Խմբի երկրները ՄԱԿ-ում բարձրացրել են տրանսպորտային ուղիների և մատակարարման շղթաների անխափան գործելու հարցը[33], միջազգային հանրության աջակցությունն իրատեսական և չափելի կլինի համաճարակի սոցիալ-տնտեսական հետևանքների հաղթահարմանն ուղղված ֆինանսական հոսքերի տեսքով, մինչդեռ տարանցիկ բեռնափոխադրումների պահպանման խնդիրները գլխավորապես կախված են տարանցիկ երկրների հետ երկկողմ պայմանավորվածություններից:

---

[31] Implementation of the Vienna Programme of Action for Landlocked Developing Countries for the Decade 2014-2024: report of the Secretary-General, United Nations Document, A/74/113, p. 12.

[32] Development Assistance Committee, OECD, Financing for development: the case of Landlocked Developing Countries. The Contribution of External Finance, https://www.oecd.org/dac/financing-sustainable-development/development-finance-topics/Financing%20for%20development%20the%20case%20of%20Landlocked%20Developing%20Countries.pdf (02.05.2020).

[33] COVID-19: For the first time we're talking about a development emergency response, UNOHRLLS, New York, 6 April 2020, http://unohrlls.org/news/covid-19-for-the-first-time-were-talking-about-a-development-emergency-response/ (02.05.2020). Տարանցիկ բեռնափոխադրումների պահպանման անհրաժեշտությունը շեշտվել է նաև համաճարակի սոցիալ-տնտեսական հետևանքների արձագանքման վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի զեկույցում (Shared responsibility, global solidarity: Responding to the socio-economic impacts of COVID-19, Report by UN Secretary-General, March 2020, https://unsdg.un.org/resources/shared-responsibility-global-solidarity-responding-socio-economic-impacts-covid-19 (02.05.2020)):

Եզրակացություն

Դեպի ծով ելքի բացակայության հիմնախնդիրները չեն դարձել Խմբի երկրների միջև հավաքական ինքնություն ձևավորող կարևոր բաղադրիչ: Ցամաքով շրջափակված այս 32 երկրներին միավորող միակ գործոնը ոչ թե լծակ է, այլ՝ խոցելիություն, որն ազդեցության գործիքներ չի տրամադրում: Հետևաբար ո՞րն է Խմբի աշխատանքներում Հայաստանի ներգրավման արտաքին քաղաքական նշանակությունը:

1. Որքան էլ Խմբի հավաքական աջակցությունը Հայաստանի ապաշրջափակման խնդրում անհիրատեսական է, կարևոր է ծովային ելք չունեցող այլ երկրների փորձի, հարևանների հետ համաձայնեցված տարանցիկ կարգավորումների ուսումնասիրությունը:
2. Միջազգային բոլոր հարթակներում հայկական շահերի դեմ արշավ իրականացնող Ադրբեջանի անդամակցությունը հրամայական է դարձնում Հայաստանի ներկայությունն ու պատշաճ ներգրավումը:
3. Խումբը հարթակ է տրամադրում այն երկրների հետ շփումների համար, որոնց հետ երկկողմ օրակարգը հարուստ չէ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներով: ՄԱԿ-ում Հայաստանի համար կարևոր քվեարկությունների, միջազգային մարմինների ընտրություններում Հայաստանի ներկայացրած թեկնածություններին սատարելու հարցերում Խումբը հնարավորություն է տալիս ապահովելու անդամ երկրների ձայները:
4. Խմբին անդամակցությունն իմաստավորվում է նաև աշխարհաքաղաքական զարգացումների ծիրում: Ուժային բևեռների վերադասավորումների արդյունքում ծովային ելք չունեցող երկրների հիմնախնդիրները կարող են դառնալ մեծ տերությունների հետաքրքրության առարկա. Խմբի երկրներն

արդեն հանդիսանում են չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շահառու[34]:

The Problems of Multilateral Cooperation Between the Landlocked Developing Countres

TIGRAN ZAKARYAN
Yerevan State University

Common geographical feature – the lack of maritime access is the only factor, unifying the 32 landlocked developing countries (LLDCs), which represent different civilizations, with distinct levels of economic development and separate foreign policy priorities. The paper discusses the limits of cooperation between those countries on multilateral platforms. LLDCs have institutionalized their cooperation in the United Nations, while they still lack a formal negotiating group in the WTO. Bilateralism within the group of LLDCs does not stand out with particular partnership as members pursue different, sometimes incompatible interests. The group's attention is primarily directed at achieving best terms for its members within international "soft law" mechanisms, which offer no tools to solve the transit barriers faced by some LLDCs. Landlocked economies are especially vulnerable amid COVID-19 outbreak. The support by international community to LLDCs will be tangible in terms of financial flows to overcome the socio-economic impacts of the pandemic, whereas transit freight transport maintenance depends on bilateral agreement with transit countries.

[34] Strengthening the capacity of Landlocked Developing Countries under the "Belt and Road Initiative" to design and implement policies that promote transport connectivity for the achievement of the SDGs, project by UN-OHRLLS, http://unohrlls.org/project-2019-2021/ (22.05.2020).